



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 փետրվարի 2023 թվականի N 18-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի  
24-ի հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և համայնքի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, 06-039-0059-0013 կադաստրային ծածկագրով 0.055695 հեկտար հասարակական կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու մասին

7. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին
8. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին
9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի «Պարտեզ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին
10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքի «Գույների աշխարհ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին
11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան գյուղի «Արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին
12. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը դրամական միջոցներ տրամադրելու մասին
13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին
14. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
15. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասը աճուրդով օտարելու մասին

Կողմ -15

Դեմ -0

Ձեռնպահ -0

Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ս. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ  
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023 փետրվարի 24  
ք. Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 փետրվարի 2023 թվականի N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022  
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային  
համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ  
մասով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2022  
թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի

Կողմ -12

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Է.ԱՐՇԱԿՅԱՆ

Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ս. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Դեմ -0

Ձեռնպահ -3

Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ

Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023 փետրվարի 24  
ք. Տաշիր

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

**1. Եկամուտների վերլուծություն**

Տաշիր համայնքի 2022թվականի բյուջեն եկամուտների գծով կատարվել է 99.7 %-ով, բյուջեով նախատեսված 1323389.6 հազար դրամի դիմաց , փաստացի մուտքերը կազմել են 1319181.9 հազար դրամ:

Սեփական եկամուտների գծով կատարվել է 87.6 %-ով, բյուջեով նախատեսված 380911.4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 333829.1 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ(2021թ սեփական եկամուտները կազմել են 308196.8 հազ դր) ավելացել են 25632.3 հազար դրամով կամ 8.3 %-ով: որից՝

- Հողի հարկի համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար նախատեսված 99665.3 հազ դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 28387.3 հազար դրամ, կատարվել է 28.5 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ(2021թ -29316.2 հազ դր ) նվազել է 928.9 հազար դրամով կամ 3,2%-ով:
- Գույքահարկի գծով փաստացի մուտքը 96798.7 հազար դրամի դիմաց կազմել 129854.0 հազար դրամ, կատարվել է 134 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ(2021թ-108716.5հազ.դր) ավելացել է 21137.5 հազար դրամով կամ 19.4%-ով:
- Անշարժ գույքի հարկի մուտքը կազմել է 29219.4 հազ.դր նախատեսված 42240.2 հազ դր դիմաց
- Տեղական տուրքերը նախատեսված 6653.0 հազար դրամի դիմաց կազմել են 6728.9 հազար դրամ, կատարվել է 101.1%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ( 2021թ- 6975.2հազ.դր ) նվազել 246.3 հազար դրամով կամ 3.5%-ով :
- Պետական տուրքերի գծով փաստացի մուտքը նախատեսված 4000.0 հազար դրամի դիմաց կազմել է 5474.4 հազար դրամ, կատարվել է 136.9 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ (2021թ- 4630.8 հազ.դր) ավելացել է 843.6 հազար դրամով կամ 18.2%-ով:
- Գույքի վարձակալությունից եկամուտները կատարվել են 104.2 %-ով, նախատեսված 73636.9 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 76754.7 հազար դրամ/ 62867.7 հազար դրամ հողի վարձ վճար, 13887.0 հազար դրամ գույքի վարձ վճար/ : Նախորդ տարվա համեմատությամբ(2021թ- 82207.7 հազ.դր) նվազել է 5453.0 հազար դրամով կամ 6.6 %-ով :
- Վարչական գանձումները՝ (տեղական վճարներ) նախատեսված 54623.3 հազար դրամի դիմաց կազմել են 53707.3 հազար դրամ, կատարվել է 98.3 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ(2021թ- 40010.7հազ.դր) ավելացել են 13696.6 հազար դրամով,կամ 34.2%-ով որից՝
- աղբահանության համար վարձավճարը նախատեսված 23347.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 14218.1 հազար դրամ, կատարվել է 60.9 %-ով:

Նախորդ տարվա համեմատությամբ (2021թ-15230.9հազ.դր) հավաքագրվել է 1012.8 հազար դրամով պակաս կամ 6.6 %-ով :

Համայնքային ենթակայության մանկապարտեզների և արտադարոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների նախատեսված 22220.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 23706.0 հազար դրամ կամ կատարվել է 106.7 %-ով (2021թ հավաքագրվել է 22008.0 հազ.դր) :

- Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-ի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները կատարվել են 244 %-ով, նախատեսված 2500.0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 6100.0 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ հավաքագրվել է 2760.0 հազ.դրամով ավել կամ 17.4 %-ով,:
- Այլ եկամուտները կազմել են 6125.6 հազար դրամ նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 7033.0 հազար դրամով:
- Պաշտոնական դրամաշնորհների գծով՝
- Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսված 730200,9 հազար դրամը ստացվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 6541,0 հազար դրամով:
- Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվել է 221929,0 հազ.դրամ ,նախատեսված 174104.3 հազար դրամի դիմաց:
- Պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումը (սուբվենցիա) նախատեսված երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար 1911,4 հազար դրամ ,
- Դրամաշնորհ ստացված միջազգային կազմակերպություններից 176,6 հազ.դր/ /Եվրոպայի խորհուրդ/
- ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից նախատեսված 1999,0 հազար դրամը կատարվել է 100 %-ով:
- Նվիրատվություն կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստատված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից 25429,9 հազար դրամ:
- Բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը (հավելուրդը կամ դիֆիցիտը) կազմել է 405559,6 հազար դրամ:

## 2. ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### 2.1 Ըստ գործառնական դասակարգմամբ

Տաշիր համայնքի 2022 թվականի բյուջեն ծախսերի գծով կատարվել է 78,6%-ով, նախատեսված 1728949,3 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 1358425,1 հազար դրամ, որից 827144,3 հազար դրամը վարչական բյուջեի մասով, իսկ 575580,9 հազար դրամը ֆոնդային բյուջեի մասով: Ծախսերը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 273449,2 հազար դրամով:

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը նախատեսված 414636,0 հազար դրամի դիմաց կազմել են 372057,6 հազար դրամ կամ կատարողականը կատարվել է 89,7 %: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 4365,4 հազար դրամով: Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի մեջ աշխատակազմի պահպանման ծախսերը նախատեսված 317344,0 հազար դրամի դիմաց կազմել են 295544,8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 93,1%, Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 15572,7 հազար դրամով:
- Տնտեսական հարաբերությունների բնագավառով ճանապարհային տրանսպորտ նախատեսված 199264,2 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 183077,6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 91,9 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 54354,2 հազար դրամով: Տնտեսական հարաբերություններ այլ դասերին չպատկանող նախատեսված / հողի և գույքի օտարումից/ 54100,0 հազար դրամի դիմաց մուտքերը կազմել 27958,2 հազար դրամ, կատարվել է 51,7 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 54081,0 հազար դրամով:
- Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 128120,0 հազար դրամի դիմաց կազմել են 116328,9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 90,8 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 6821,8 հազար դրամով:
- Բնակարանային շինարարության և կոմունալ տնտեսության գծով ծախսերը նախատեսված 465425,1 հազար դրամի դիմաց կազմել են 342953,1 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 73,7 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 128664,0 հազար դրամով:
- Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառով նախատեսված 152989,8 հազար դրամի դիմաց կազմել են 133935,8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 87,5 %-ով Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 16566,1 հազար դրամով:
- Կրթության բնագավառով նախատեսված 229960,0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 183762,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 79,9%-ով; Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 13868,8 հազար դրամով:
- Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 11900,0 հազար դրամի դիմաց կազմել են 6407,7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 53,8%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1538,3 հազար դրամով:
- Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդի մնացորդը կազմել է 81286,2 հազար դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 փետրվարի 2023 թվականի N 20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ  
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 82-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի  
2022-2027 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -3

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ս. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023 փետրվարի 24  
ք. Տաշիր





**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
2022-2027**



*Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Էդգար Արշակյանի կողմից  
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 24. 02. 2023թ. 20Ա որոշմամբ*

*Մշակվել է՝ Զարգացման ծրագրերի, փորձի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի  
կողմից*

*Տաշիր համայնք  
2023թ.*

Բովանդակություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ .....	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	4
1.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ...12	
1.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ 13	
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ .....	<b>Ошибка! Закладка не определена. 22</b>
1.4 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	26
2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ28	
2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ	<b>Ошибка! Закладка не определена.....28</b>
2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ .....	32
2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ .....	32
3. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....	48
4. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ .....	52
ԵԶՐԱՓԱԿՈՒՄ .....	56

## Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակվել է Տաշիր համայնքի 2022-2027թթ. զարգացման ծրագիրը: Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթուղթն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջեավարման գործընթացի իրականացումը: Տաշիր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակվել է համայնքի ռեսուրսներն, հնարավորություններն ու կարողությունները հաշվի առնելով: 2022-2027թթ համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են լինելու համայնքի բնակչության և տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանությունը, համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավումը, քաղաքի արտաքին լուսավորության բնագավառում կապիտալ ներդրումների կատարումը, համայնքի կանաչ գոտիների և զբոսայգիների բարեկարգումը, կրթության, մշակույթի և մարզական օջախների վերազինման և նպատակային գործունեությանը հատուկ ուշադրություն դարձնելը, համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը, համայնքի ֆինանսական կացության բարելավումը: Հարգելի Տաշիր համայնքի բնակիչներ համայնքի զարգացման հնգամյա պլանը միտմամբ է բարելավելու մեր արժանապատիվ կյանքը: Ուստի խնդրում եմ անմասն չմնալ և Ձեր կողմից վստահված իշխանության կրողների՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին մասնակցել ծրագրի կենսագործմանը:

### 1.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Ստեփանավան, Լոռի Բերդ համայնքներին: Տաշիրով է անցնում Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական մայրուղին, որն ունի ռազմավարական նշանակություն: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2022 թվականի հունիսի 9-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Տաշիր, Մեծավան, Սարչապետ համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Տաշիր բազմաբնակավայր խոշորացված համայնքը: Այսպիսով, ներկայում Տաշիր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Տաշիր քաղաքը և Ապավեն, Արծնի, Բլագոդարնոյե, Գետավան, Գոգավան, Դաշտադեմ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Կռուգլայա-շիշկա, Ձյունաշող, Ձորամուտ, Մեղովկա, Մեծավան, Մեղվահովիտ, Միխայլովկա, Նովոսելցովո, Նորամուտ, Նորաշեն, Պաղաղբույր, Պետրովկա, Պրիվոլնոյե, Սարատովկա, Սարչապետ բնակավայրերը (աղյուսակ 1): Համայնքի վարչական կենտրոնը Տաշիր քաղաքն է: Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվություն համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վերաբերյալ:

### **Տաշիր քաղաք**

Տաշիրը քաղաքային համայնք է Տաշիրի տարածաշրջանում՝ նախկին Կալինինոյի շրջանի վարչական կենտրոնը: Համայնքը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում՝ Լոռվա սարահարթում: Քաղաքի հեռավորությունը մայրաքաղաքից 163 կմ է, իսկ մարզկենտրոնից՝ 52կմ: Քաղաքի միջով է հոսում Դեբետ գետի վտակը հանդիսացող Տաշիր գետը: Քաղաքը հիմնադրվել է 1844թ. Ռուսական Կայսրության կառավարության կարգադրությամբ Սարատովի մարզից այստեղ տեղափոխված ռուսների կողմից և Կովկասի փոխարքայի անունով կոչվել է Վարանցովկա: 1935թ. այն վերանվանվել է հեղափոխական գործիչ Կալինինի անունով և կոչվել է Կալինին: 1961թ. դարձել է քաղաքատիպ ավան, իսկ 1983թ. դասվել է Հայաստանի քաղաքների շարքին: Տաշիր է վերանվանվել 1991թ. Տաշիր գավառի անունով: Տաշիր քաղաքով է անցնում Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստան միջպետական մայրուղին, որն ունի ռազմավարական նշանակություն: Քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1500 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է, օդի հունվարյան միջին ջերմաստիճանը  $-2.6^{\circ}\text{C}$ , հուլիսինը՝  $17^{\circ}\text{C}$ : Տարեկան թափվում են 630 մմ մթնոլորտային տեղումներ: Բարենպաստ բնակլիմայական պայմանների և ալպիական մարգագետինների առկայությունը հիմք են ստեղծում անասնապահության, հացահատիկային կուլտուրաների մշակության զարգացման համար: Համայնքի բնակչության 45,3% կազմում են տղամարդիկ և 54,7% կանայք: Քաղաքի բնակիչները զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ, ինչպես նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Համայնքում պատմական և մշակության հուշարձանները շատ չեն : Տաշիրի հյուսիսարևելյան մասում գտնվում է Միլիտկա եկեղեցին, որը ըստ պատմա-համեմատական վերլուծության պատկանում է 10-12-րդ դդ., Տաշիր քաղաքից 0.7 կմ հյուսիս արևելք: Ավերակ է, հարավային մասում՝ ավերակների վրա, կառուցվել է մատուռ: Տեղացիների մոտ այն հայտնի է «Բլուկ վանք» անվանումով: Տաշիր քաղաքի նշանավոր պատմաճարտարապետական կոթող է համարվում Հայրենական պատերազմի զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանը: Այն կառուցվել է 1961թ. ռուս և հայ բնակչության հանգանակած միջոցներով, Հայ առաքելական Սուրբ Եկեղեցին, որը կառուցվել է 2000 թվականին, Հայ Կաթողիկե Աթ. Աստվածածնի վերափոխման եկեղեցին:

### **Բլագոդարնոյե գյուղ**

Բլագոդարնոյե՝ գյուղ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում, Տաշիրի տարածաշրջանում, Սևաբերդ գետակի ձախ ափին, Տաշիր քաղաքից 10 կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից 62 հեռավորության վրա: Գյուղի մակերեսը կազմում է 11,77 քառ.կմ, ԲԾՄ-ն 1615 մ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բուսաբուծությամբ: Գյուղը հիմնադրվել է 1907-1908 թվականներին Կիրիլ անունով մոլոկանի կողմից և այն անվանվել է Կիրիլովկա: Հետագայում գյուղը անվանել են Բլագոդարնոյե: Սկզբնական շրջանում գյուղը եղել է ռուսաբնակ, այնուհետև խորհրդային միության տարիներին գյուղ են եկել ադրբեջանցիները, որոնք Արցախյան շարժման ժամանակ 1988 թվականին հեռացել են գյուղից: Ներկայումս գյուղը ամբողջությամբ բնակեցված է հայերով: ՌԻ-ի հիմնական դպրոց, բուժկետ, կապի հանգույց: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը զով: Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 256, որից մշտական՝ 220: Բնակավայրի բնակչության 30-40%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ համայնքում ցածր է գյուղմթերքի արտադրանքի սպառումը, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է անասնապահությունից:

### **Դաշտադեմ գյուղ**

Դաշտադեմ գյուղը նախկինում ունեցել է Իլմազլու անվանումը, իսկ Դաշտադեմ վերանվանվել է 1991թ-ին: Դաշտադեմ գյուղը մինչև 1988թթ բնակեցված է եղել ադրբեջանցիներով: Արցախյան շարժումից հետո վերաբնակեցվեց, Բաքվից, Շամախից, Կիրովաբադից և Շահումյանից գաղթած, այդ թվում նաև Վրաստանի՝ Ախլալակի և Բոգդանովկայի շրջաններից տեղափոխված հայերից և հարևան համայնքներից եկած բնակիչներից: Գյուղի մասնագիտացման հիմնական ուղղությունը անասնապահությունն է: Զբաղվում են նաև մեղվաբուծությամբ: Գյուղը գտնվում է Տաշիր քաղաքից 10-կմ դեպի արևմուտք, իսկ մարզկենտրոնից 62 կմ հեռավորության վրա: Մինչև 1991-1992թթ գյուղը ուներ 320 տնտեսություն, այսօր գյուղում կա ընդամենը 46 տուն, որից բնակեցված է 31-ը: Բարձրությունը ծովի մակարդակից 1650 մետր: Կլիման բարեխառն է, ձմեռը ցրտաշունչ, ամառը զով: Հաճախ են երկարատև անձրևները և կարկտահարությունը, որի պատճառով շատ են տուժվում գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվող գյուղացիները: Գյուղի հիմնախնդիրների մեջ կարևորվում են գազաֆիկացումը, խմելու ջրագծերի ներքին ցանցի վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղ մտնող և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

### **Մեղովկա գյուղ**

Մեղովկա բնակավայրը հիմնադրվել է 1928 թվին, 19-րդ դարի սկզբներին ցարական Ռուսաստանից աքսորված ռուս-մոլոկանների կողմից: Ներկայումս գյուղը վերաբնակեցվել է 20-րդ դարի վերջին տասնամյակում Ադրբեջանական ՍՍՀ-ից բռնագաղթված և Հայաստանի տարբեր տարածաշրջաններից տեղափոխված հայազգի բնակիչներով: Բնակավայրը ծովի մակերևույթից ունի 1600մ բարձրություն: Բնակավայրը զուրկ է բնական աղբյուրների պաշարներից: Մեղովկա գյուղը խմելու ջուր ստանում է Տաշիր քաղաքի ջրամբարից: Մեղովկա գյուղի խմելու ջրի և՛ արտաքին, և՛ ներքին ցանցը կապիտալ վերանորոգված է: Բնակավայրը մարզկենտրոնից ունի 50,0կմ հեռավորություն, Վրաստանի պետական սահմանից հեռավորությունը կազմում է 16,0 կմ, հանրապետական նշանակության ավտոմայրուղուց՝ 6,0կմ: Բնակավայրը զուրկ է պատմաճարտարապետական հուշարձաններից: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը զով:

### **Կրուզլայա-Շիշկա գյուղ**

Կրուզլայա-շիշկա գյուղը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում է՝ Տաշիր քաղաքից մոտ 5կմ հյուսիս-արևելք, Տաշիր գետի ձախ կողմում, Բոլորկոն լեռան ստորոտին: 2017 թվականից մտնում է Տաշիր համայնքի կազմի մեջ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600մ է, հեռավորությունը Մեղովկա գյուղից՝ 3 կմ հյուսիս: Գյուղը հիմնադրվել է 1830 թվականին, վերաբնակեցվել է Արցախից բռնագաղթված հայերով: Բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ, կլիման բարեխառն է, ձմռանը ցրտաշունչ է, ամռանը զով: Կրուզլայա-Շիշկա գյուղի ջրային ցանցը գտնվում է վթարային վիճակում, կարգավորիչ ջրամբարի հատակին և պատերին առաջացել են ճեղքվածքներ, որը պատճառ է հանդիսանում ջրամբարի հասած ջրի կորստյանը: Բնակավայրում կան երեք պատմաճարտարապետական հուշարձաններ: Գյուղից 2,5 կմ հարավ պահպանվել են ամրոցի ավերակներ, իսկ արևմտյան եզրում «Կարմրական» գյուղատեղիի և միջնադարյան գերեզմանոցի ավերակներ են պահպանվել:

### **Մեղվահովիտ գյուղ**

ՀՀ Լոռու մարզի Մեղվահովիտ գյուղը որպես բնակավայր ձևավորվել է 1990թ.-ին Մեղվահովիտ և Նորամուտ գյուղերից: Ադրբեջանցիների կողմից գյուղը լքելուց հետո այն վերաբնակեցվել է Գետաշենից և Բաքվից բռնագաղթվածներով, ինչպես նաև աղետի գոտուց՝ Սպիտակից, Գյումրուց եկած բնակիչներով: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1790կմ բարձրության վրա: Գյուղի կլիման ցրտաշունչ է, ձմեռը խիստ, քամիները շատ, ամառը զով: Բնակավայրի վարչական տարածքը կազմում է 7864,4 հա, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 195 կմ, մարզկենտրոնից՝55 կմ, տարածաշրջանային կենտրոնից 11 կմ: Բնակավայրը իր վարչական սահմաններով սահմանակից է Դաշտադեմ և Բլագոդարնոյե բնակավայրին, արևմուտքից Աշոցքի տարածաշրջանին:

### **Նորամուտ գյուղ**

Նորամուտ գյուղը գտնվում է Տաշիր քաղաքից մոտ 12 կմ արևմուտք, Լոռի գետի ափին՝Հնում կոչվել է նաև Ղարաղլախ: Բնակչության մեծամասնությունը զբաղվում է անասնապահությամբ: Բարձրությունը ծովի մակերևույթից 1700 մետր է: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 198 կմ, մարզկենտրոնից՝58 կմ, տարածաշրջանային կենտրոնից 14 կմ: Կլիման ցրտաշունչ է, ձմեռը խիստ, քամիները շատ, ամառը զով: Նորամուտը նույնպես դասվում է վերաբնակեցված գյուղերի շարքին: Ունի ութամյա դպրոց, գրադարան: Ունեցել է տարրական դպրոց, գրադարան, բուժկայան: Գյուղում և շրջակայքում պահպանվել են ամրոց (միջնադար), գյուղատեղիներ, մատուռ, դամբարաններ (մ.թ.ա. II - I հազարամյակ), քարայրեր, կամուրջ, ջրաղացներ, գերեզմանոց, եկեղեցի: Գյուղը վարչական սահմաններով սահմանակից է Մեղվահովիտ և Դաշտադեմ գյուղերին, իսկ արևմուտքից Աշոցքի տարածաշրջանին:

### **Լեռնահովիտ գյուղ**

Լեռնահովիտ գյուղը, հայկական լեռնաշխարհի այս գոգտրիկ անկյունը, չորս կողմից շրջապատված է բարձրադիր լեռներով և խորը ձորերով: Մեր պապերը գաղթել են Մուշից և Ղարսից, ընդամենը 7 գերդաստան բոլորն էլ պարսիկների և թուրքերի կողմից հալածված: 1818 թվականին հասել են Շիրակի դաշտի գյուղերը: Իմանալով, որ Տաշիրի գավառում ազատ տեղեր կան, որոնք միավորվել են ռուսաց տիրապետությանը և ապահով վիճակ է ստեղծվել հայի համար , 1822-23թթ եկել և բնակություն են հաստատել մի ավերակ գյուղատեղում: Այստեղ պահպանվել է միայն սև խոշոր քարերով շարված երբեմնի վանքի պատերից մեկը: Տեսնելով լեռան թեք հարթության վրա ավեր շինությունը, նորեկ բնակիչները այն անվանել են վանք, իսկ լեռը վանքիդոշ: Տներ են կառուցել լեռան ցածրադիր մասում

գյուղն անվանել են Ղարաքիլիսա, այժմ Լեռնահովիտ: Բնակավայրը գտնվում է Տաշիր քաղաքից 9 կմ, իսկ մարզկենտրոնից 60 կմ հեռավորության վրա: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1650 մ բարձրության վրա, կլիման բարեխառն է: Ձմեռը ցուրտ է, կայուն և երկարատև ձյան ծածկույթն սկսվում է նոյեմբերի վերջից և վերջանում ապրիլի երկրորդ տասնօրյակում: Գարունը երկարատև է ու ցուրտ: Ցրտահարությունները միջին տվյալներով վերջանում են մայիսի երկրորդ կեսից: Ամառը կարճ է, զով ու չոր: Աշունը սառն է, առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած ու տաք եղանակը, երկրորդ կեսը փոփոխական է, հաճախ են երկարատև անձրևները և կարկտահարությունը, որի պատճառով շատ են տուժվում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիները: Բնակավայրը ունի միջնակարգ դպրոց, բուժկետը գտնվում է ուսուցչի տան առաջին հարկում, մշակույթի տունը վերանորոգված է: Բնակավայրում կա երկու եկեղեցի հիմնանորոգված: Գյուղի կենտրոնում կա մի հուշարձան և մի խաչքար, գյուղի Կոնդ կոչվող բլրի վրա կա հուշարձան: Գյուղի բնակչության 20%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, նրանց ապրուստի հիմնական միջոցը ստացվում է բանջարաբուստանային մշակաբույսերից:

## **Սարատովկա գյուղ**

Սարատովկա գյուղը գտնվում է մարզկենտրոնից 45 հեռավորության վրա: Բնակավայրի տարածքը կազմում է 2223,39 հեկտար: Գյուղը ունի աշխարհագրական ոչ այնքան բարենպաստ դիրք, ծովի մակարդակից բարձր է 1480մ, չկան անտառածածկ տարածքներ: Գյուղի միջով հոսում է Տաշիր գետը: Բնակավայրի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում: Ձմեռը ցուրտ է, կայուն և երկարատև: Ձյան ծածկույթը սկսվում է նոյեմբերի վերջից և վերջանում ապրիլի 2-րդ տասնօրյակում: Գարունը երկարատև է ու ցուրտ: Ցրտահարությունները միջին տվյալներով վերջանում են մայիսի 2-րդ կեսից: Ամառը կարճ է, զով ու չոր: Աշունը սառն է, առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած ու տաք եղանակը, երկրորդ կեսը փոփոխական է: Աշնանային ցրտահարությունները սկսվում են սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին: Հաճախ են լինում երկարատև անձրևներ և կարկտահարություն, որից տուժում են գյուղատնտեսությամբ ու անասնապահությամբ զբաղվող գյուղացիները: Գյուղի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, դաշտավարությամբ, մեղվաբուծությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղը ունի միջնակարգ դպրոց, բուժկետ: Սարատովկա գյուղը հիմնադրվել է 1910 թվականին: Եկատերինա երկրորդի ժամանակ աքսորված մալականներից Բոգդանով ազգանունով մի մարդ բնակություն է հաստատել այդ տարածքում, զբաղվել անասնապահությամբ և այդ մասը անվանել են Բոգդանով խուտոր: Հետզհետե մոտակա գյուղերից եկել և բնակություն են հաստատել այստեղ և գյուղը անվանվել է Սարատովկա: Գյուղը վարչական տարածքով սահմանակից է Տաշիր և Ստեփանավան քաղաքներին: Գյուղի մոտով է անցնում Երևան-Թբիլիսի մայրուղին:

## **Գետավան գյուղ**

Գետավան (նախկինում անվանել են նաև Ղզղալա) գյուղը գտնվում է Տաշիրի տարածաշրջանում՝ Տաշիր քաղաքից մոտ 3 կմ հարավ-արևելք՝ Տաշիր գետի աջ ափին: Գյուղը տեղակայված է ծովի մակերևույթից 1470մ բարձրության վրա: Վերանվանվել է Գետավան 1978թ. հունվարի 25ին: 2017թվականից մտնում է Տաշիր համայնքի կազմի մեջ: Բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: Գյուղից 3 կմ հարավ-արևելք կան 10-11դդ. ամրոցի, քաղաքատեղիի «Տաշիր» («Բադան») ավերակներ և մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. բնակատեղի և դամբարանադաշտ: Գյուղի մոտով է անցնում Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստան միջպետական մայրուղին: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 188 կմ, մարզկենտրոնից՝ 44 կմ, տարածաշրջանային կենտրոնից 10 կմ: Բնակավայրը վարչական տարածքով սահմանակից է Սարատովկա գյուղին և Ստեփանավան համայնքին: Գյուղի

բնակիչները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, դաշտավարությամբ և մեղվաբուծությամբ: Բնակավայրի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում, բանական ռեսուրսների տեսանկյունից հարուստ չէ, ատառաձաձկ տարածքները գրեթե բացակայում են:

### **Կաթնառատ գյուղ**

Կաթնառատ գյուղը գտնվում է Լոռու մարզի վարչական տարածքի հյուսիս-արևմտյան մասում, Կեչուտի լեռնաշղթայում՝ Ստեփանավան քաղաքից 30կմ արևմուտք ընկած լայնարձակ սարահարթում, ծովի մակարդակից 1540մ բարձրության վրա: Մերձալպիական այս գոտին տարածվում է մինչև Խոնավ, Մթին կամ Արտասվող լեռների ստորոտները: Այստեղով է հոսում Ձորագետի գլխավոր վտակը՝ Կամենկան: Հարմար ռելիեֆի, ազատ տեղումների և կլիմայական բարեհաջող այլ պայմանների շնորհիվ այստեղ հարուստ բուսականություն է աճում, որը չափազանց նպաստավոր բազա է ստեղծում անասնապահության զարգացման համար: Անասնապահության զարգացման համար չափազանց նպաստավոր պայմաններից օգտվելով 1897 թ.-ին այստեղ իր տնտեսությունն է հիմնել շվեցարացի գրաֆ Գոտլիբը: Հետագայում ՀՍՍՀ կառավարության հատուկ որոշումով շվեցարացի գրաֆ Գոտլիբի կալվածքի հիման վրա 1923թ.-ին կազմակերպվում է պետական անասնապահական տնտեսություն՝ «Պետֆերմա», իսկ 1930թ.-ից «Սովխոզ»՝ Մոսկվայի ենթակայության և 1953թ.-ից այն հանդիսացել է «Լոռվա տոհմաբուծական» տնտեսությունը վերանվանվել է «Կաթնառատ»: Կաթնառատ համայնքը գտնվում է Լոռու մարզում Կամենկա գետից դեպի հարավ, սահմանակից է 3 գյուղերի: Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 65կմ, մայրաքաղաքից 180կմ, ամենամոտ երկաթուղային կայանից՝ Թումանյանից՝ 40կմ, իսկ Տաշիր քաղաքից 16 կմ հեռավորության վրա: Ռելիեֆն ունի հյուսիս-հարավային թեքություն: Կաթնառատ գյուղում 2016թ.-ի հունվարի 1-ի դրությամբ հաշվառված ապրում են 1069 մարդ՝ տղամարդիկ կազմում են բնակչության 45.5%-ը:

### **Նովոսելցովո գյուղ**

Նովոսելցովո գյուղը կազմավորվել է 1913թ. ռուս մեծահարուստ Նովոսելցովո ազգանվամբ անձի կողմից, որը 1840-ական թվականներին գաղթել է մի խումբ աքսորյալների հետ, որոնք մոլդականներ էին՝ աքսորված ցարական Ռուսաստանից այն պատճառով, որ իրենց հավատը չի համընկել իշխանության քաղաքականությանը: Վերջինս Վարանցովկայից մի քանի ռուս ընտանիքների հետ տեղափոխվել է դեպի հարթավայր՝ անասնապահությամբ զբաղվելու համար և հիմնադրել է այս օրվա Նովոսելցովո գյուղը: Նովոսելցովո գյուղը գտնվում է մարզկենտրոնից 50 կմ հեռավորության վրա: Գյուղի տարածքը կազմում է 896 հեկտար: Գյուղը ունի աշխարհագրագան ոչ այնքան բարենպաստ դիրք, ծովի մակարդակից բարձր է 1475 մ, չկան անտառաձաձկ տարածքներ, համայնքով է հոսում Ձորագետ գետը: Գյուղի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում: Ձմեռը ցուրտ է, կայուն և երկարատև ձյան ծածկույթը սկսվում է նոյեմբերի վերջից և վերջանում ապրիլի 2-րդ տասնօրյակում: Գարունը երկարատև է և ցուրտ: Ցրտահարությունները միջին տվյալներով վերջանում են մայիսի 2-րդ կեսից: Ամառը կարճ է և զով: Աշունը սառն է, առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած ու տաք եղանակը, երկրորդ կեսը փոփոխական է: Աշնանային ցրտահարությունները սկսվում են սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին: Հաճախ են լինում երաշտի տարիներ, որից տուժում են գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիները: Խորհրդային տարիներին գյուղացիներն զբաղվում էին անասնաբուծությամբ, դաշտավարությամբ: Գյուղը ունի բուժկետ: Գյուղի բնակչության առկա թիվը 207 է:

### **Մեծավան գյուղ**



Մեծավան գյուղը գտնվում է Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 10 կմ հյուսիսարևմուտք, մարզկենտրոնից 62 կմ հեռավորության վրա: Մեծավանը նախկինում կրել է Շահնագար անունը: Գյուղի բնակչության հիմնական մասը (160տուն) 1820թվականին գաղթել է Ալաշկերտի գավառի Երեց գյուղից (նաև՝ Իրիցու գեղ): Գյուղի մասին գրավոր արժանահավատ տեղեկություններ է ներկայացրել ժամանակին Հռոմում ուսանած Սարգիս Վարդապետ Յագիչյանը: Շահնագարը Մեծավան է վերանվանվել 1978 թվականին: Ցարական Ռուսաստանի ժամանակ մտել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեջ: Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1575մ: Կլիման բարեխառն է, ամառը զով, իսկ ձմեռը հիմնականում՝ մեղմ: Կայուն ձնածածկույթ շատ քիչ տարիների է հաստատվում: Տարեկան մթնոլորտային տեղումները կազմում են 700-800մմ: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 4903, 9 հա, որից՝ 1802,3 հա վարելահող, 1628,3 հա խոտհարք, 1338,6 հա արոտ: Գյուղի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և գյուղատնտեսությամբ: Անասնապահության մեջ գերակշռում են տավարաբուծությունն ու ոչխարաբուծությունը: Մշակվող գյուղատնտեսական կուլտուրաներն են ցորենը, գարին և կարտոֆիլը: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են բնակչությանը խմելու ջրով ապահովելը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: Գյուղը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնք բազմադարյա պատմություն ունեն: Գյուղի կենտրոնում է գտնվում 5-6-րդ դդ. Սբ. Գևորգ եկեղեցին, որից փոքր-ինչ հյուսիս գտնվում է Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին 5-6-րդ դդ., դաշտամիջյան հնավայրերում՝ Ավերք գյուղատեղիում, գտնվող Խարաբի վանք (Կոկո Բեգո- Սբ. Հակոբ) մատուռը, հայ-վրացական սահմանի մոտ գտնվող 8-9-րդ դդ. Թևավոր Խաչ խաչարձանը, որի մոտ տեղացիները 20-րդ դարում կառուցել են Սբ. Հովհաննես Մկրտիչ մատուռը: 21-րդ դարում տեղացիները կառուցել են նաև Սբ. Սարգիս և Կենարար Սուրբ Խաչ մատուռները: Մեծավանը սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը:

## **Պաղաղբյուր գյուղ**

Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 20 կմ հյուսիս-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 72 կմ հեռավորության վրա: Նախկինում Սոյուղբուլազ գյուղը հիմնադրվել է 1870 թ., վերաբնակեցվել է 1859 թ-ին հայերի կողմից: Պաղաղբյուր է վերանվանվել 1991 թ-ին: Բարձրությունը ծովի մակարդակից 1750 մ է: Կլիման բարեխառն, լեռնային է, տևական ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը՝ 600-700 մմ: Հաճախակի են ուժեղ քամիներն ու փոթորիկները: Գյուղատնտեսական նշանակության հողերը 1193.3 հա, որից 20.5 հա վարելահող, 650.9 հա խոտհարք, 503.3 հա արոտ: Գյուղի մասնագիտացված ուղղությունն անասնապահությունն է: Գյուղն ունի դպրոց, մշակույթի տուն, բուժկետ: Գյուղի հիմնախնդիրների մեջ կարևորվում են խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցումը, գազաֆիկացումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղամիջյան և միջհամայնքային ճանապարհների վերանորոգումը: Համայնքը սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը և համարվում է սահմանամերձ համայնք:

## **Ձյունաշող գյուղ**

Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 15 կմ հյուսիս-արևմուտք, մարզկենտրոնից 67 կմ հեռավորության վրա: Ձյունաշող, նախկինում՝ Կըզըլջաֆակ, Ղըզըլջաֆակ: Գյուղը հիմնադրվել է 1870 թ-ին, վերաբնակեցվել է 1889 թ-ին Ադրբեջանից բռնագաղթված հայերի կողմից: Բարձրությունը ծովի մակարդակից 1580 մ է: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը՝ զով: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1423,3 հա, որից՝ 426,4 հա վարելահող, 737,2 հա խոտհարք, 236, 6 հա արոտ: Հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու: Գյուղն ունի դպրոց, մշակույթի տուն, բուժկետ, կապի հանգույց: Գյուղի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցի հիմնավերանորոգումը, գազաֆիկացումը, խմելու ջրագծերի ներքին ցանցերի վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

## **Միխայլովկա գյուղ**

Տաշիր քաղաքից 14 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 59 կմ հեռավորության վրա: Գյուղը հիմնադրվել է 1870-ական թվականներին: Սկզբնական բնակիչները եղել են մոլդկաններ: 1953 թ-ից այստեղ բնակվել են ադրբեջանցիներ, 1988 թ-ից հետո՝ Ադրբեջանից տեղահանված հայ փախստականները և շրջակա գյուղերի վերաբնակիչները: Բնակչությունը ծովի մակարդակից 1520 մ է: Կլիման բարեխառն է, ձմեռը՝ երկարատև ու ցրտաշունչ, ամառը՝ զով: Հաճախ են երկարատև անձրևներն ու կարկտահարությունը: Ոռոգման ջուր չունենալու պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ. մթերքների արտադրությունը: Հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, առվույտի, կարտոֆիլի, կաղամբի և այլ բանջարա-բոստանային կուլտուրաների արտադրությամբ: Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝ անասնապահությունը, և դաշտավարությունը: Գյուղատնտեսությամբ զբաղվում է 200 գյուղացիական տնտեսություն: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1820,4 հա, որից՝ 1052,2 հա վարելահող, 441,5 հա խոտհարք, 270,8 հա արոտ: Գյուղի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցի մի մասնաշենքի հիմնանորոգումը, խմելու ջրագծերի ներքին ցանցի վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

## **Սարչապետ գյուղ**

Սարչապետ գյուղը գտնվում է Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 16 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 68 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 176կմ: Գյուղը սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը: Սարչապետ գյուղը կազմավորվել է 19 ռդ դարի 20-30-ական թվականներին: Բնակչության հիմնական մասը գաղթել է Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Մոլխսման գյուղից, որտեղից էլ տեղահանվել են 1826-1828թթ. ռուս պարսկական պատերազմի օրերին: Գյուղը կրում է Սարչապետ անվանումը, որը երբևէ փոփոխության չի ենթարկվել և որի ծագումնաբանությունը հայտնի չէ: Գյուղում գյուղատնտեսության փոքր-ինչ չափով զարգացած ճյուղերից են անասնապահությունը և հողագործությունը: Հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կարտոֆիլի արտադրությամբ: Գյուղ տանող ճանապարհը ասֆալտապատ է, բարեկարգված և կանաչապատված է գյուղի կենտրոնը, գիշերային լուսավորությամբ ապահովված են բոլոր փողոցները, գյուղի 60 %-ը ապահովված է շուրջօրյա խմելու ջրով, առկա է գազամատակարարում: 2015 թվականի հունիսից լուծվել է նաև աղբահանության խնդիրը: Չկան կարկտակայաններ և բավարար գյուղտեխնիկա: Բացակայում են բնակչության զբաղվածության ապահովման պայմանները: Գյուղի բարձրությունը ծովի մակարդակից 1705 մետր է: Բնակավայրի ռելիեֆը լեռնային է, խիստ էռոզացված, ամռանը զով է, ձմռանը՝ չափավոր ցուրտ: Ձմռան տևողությունը 202 օր է, իսկ ամռանը՝ 163 օր: Տարեկան միջին ջերմաստիճանը 3.6°C է, իսկ առավելագույնը՝ +28°C -30°C: Տարեկան տեղումների քանակը 700-720մմ է: Առանձին տարիներին երաշտ է լինում: Կարկտային օրերի թիվը կազմում է 20-25 օր: Գյուղի վարչական տարածքը կազմում է 2216.18 հա : Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 2209 մարդ :

## **Պետրովկա գյուղ**

Պետրովկա գյուղը գտնվում է Հայաստանի հյուսիսում, Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում: Հեռավորությունը մարզկենտրոնից 60 կմ է, Տաշիր քաղաքից՝ 8 կմ է, իսկ մայրաքաղաքից՝ 168 կմ, Վրաստանի սահմանից հեռավորությունը 3կմ է: Գտնվում է Հայաստան-Վրաստան միջպետական մայրուղուց 1կմ հեռավորության վրա: Պետրովկա գյուղի հիմնադրման վերաբերյալ ստույգ տվյալներ չկան, ենթադրվում է, որ հիմնադրվել է 18-րդ դարի վերջերին, 19-րդ դարի սկզբներին՝ ցարական Ռուսաստանի կայսրուհի Եկատերինայի կողմից արտաքսված այլահավատ ռուսների կողմից: Ռուսներին փոխարինել են ադրբեջանցիները, իսկ 1988-89թթ. գյուղը վերաբնակեցվել է Ադրբեջանից գաղթած հայերով: Բարձրությունը ծովի մակարդակից 1570 մետր: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը զով: Հաճախ են երկարատև անձրևները և կարկտահարությունը, որից տուժում են գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիները: Գյուղի շրջակայքը հարուստ է կավով,

ավազով և սևահողային արգավանդ դաշտերով: Բնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, գարու, կարտոֆիլի, կաղամբի մշակությամբ, անասնապահությամբ, ոչխարաբուծությամբ: Գյուղ տանող ճանապարհը ասֆալտապատ է, ապահովված է խմելու ջրով, սակայն ունի բնակիչներին բաժանորդ դարձնելու խնդիր, գազամատակարարում չունի համայնքի մոտ 80%-ը: Գյուղի միայն կենտրոնական մասն է ապահովված գիշերային լուսավորությամբ: 2018 թվականից իրականացվում է աղբահանություն: Գյուղի վարչական տարածքը կազմում է 564.09 հա: Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 271 մարդ:

### **Ձորամուտ գյուղ**

Ձորամուտ գյուղը գտնվում է Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում, սահմանակից է Վրաստանի հանրապետությանը: Հեռավորությունը մարզկենտրոնից 60 կմ է, Տաշիր քաղաքից՝ 10կմ է, իսկ մայրաքաղաքից՝ 160 կմ: Գյուղը նախկինում կոչվել է Էվլու, որը հիմնվել է 1890թ.-ին ադրբեջանցիների կողմից, վերաբնակեցվել է 1989թ. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների և Ջավախքից վերաբնակեցվածների կողմից: Բարձրությունը ծովի մակարդակից 1600-1700 մետր է: Ռելիեֆը թմբային է, կտրտված ձորակներով և փոքրիկ հեղեղատներով: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը՝ զով: Բնակչությունը հիմնական զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղ տանող ճանապարհը ասֆալտապատ է, առկա է խմելու ջրի մատակարարում, սակայն ունի բնակիչներին բաժանորդ դարձնելու խնդիր: Իրականացվում է աղբահանություն: Բացակայում է գիշերային լուսավորությունը և գազամատակարարումը: Գյուղի վարչական տարածքը կազմում է 729,74 հա: Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 334 մարդ:

### **Գոգավան գյուղ**

Գոգավան բնակավայրը գտնվում է Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 13կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից 63կմ հեռավորության վրա, մայրաքաղաքից՝ 163կմ: Սահմանակից է Վրաստանի հանրապետությանը: Բնակավայրը նախկինում կոչվել է Դեմուրչիլար, որը հիմնվել է 1890թ.-ին ադրբեջանցիների կողմից, վերաբնակեցվել է 1989թ. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների կողմից: Գոգավան է վերանվանվել 1991 թվականից: Բարձրությունը ծովի մակարդակից 1570 մետր է: Ռելիեֆը թմբային է, կտրտված ձորակներով և փոքրիկ հեղեղատներով: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը՝ զով: Գոգավանում է գտնվում հայ-վրացական երեք անցակետերից մեկը՝ Գոգավան-Գուգուտի: Բնակչությունը հիմնական զբաղվում է անասնապահությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղ տանող ճանապարհը ասֆալտապատ է, առկա է խմելու ջրի մատակարարում, սակայն ունի բնակիչներին բաժանորդ դարձնելու խնդիր: Իրականացվում է աղբահանություն: Բացակայում է գիշերային լուսավորությունը և գազամատակարարումը: Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 53 մարդ:

### **Պրիվոլնոյե գյուղ**

Պրիվոլնոյե գյուղը գտնվում է Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 17 կմ, մարզկենտրոնից 52 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 160 կմ: Համայնքը սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը: Գյուղը հիմնադրվել է 1850թ.: Հիմնական բնակչությունը եղել են ռուսներ, որոնք տեղափոխվել էին ցարական Ռուսաստանի տարբեր մարզերից: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1585 մ բարձրության վրա: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Պրիվոլնոյեի օդը կազդուրիչ է ու առողջարար, բուսականությունը՝ լեռնային: Բնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, գարու, կարտոֆիլի մշակությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Գյուղը ապահովված է գիշերային լուսավորությամբ՝ 30%-ով և գազամատակարարումով՝ 90%-ով, առկա է շուրջօրյա ջրամատակարարում, 2018 թվականից լուծվել է նաև աղբահանության խնդիրը: Բացակայում են բնակչության զբաղվածության ապահովման պայմանները: Գյուղ տանող ճանապարհը ունի ասֆալտապատման խնդիր: Առկա չեն կարկտակայաններ: Գյուղի վարչական տարածքը կազմում է 5990.87 հա: Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 1041 մարդ:

### **Նորաշեն գյուղ**

Նորաշեն գյուղը գտնվում է Տաշիր քաղաքից 11կմ դեպի հյուսիս-արևմուտք, ՄՅ մայրուղու հարևանությամբ, մարզկենտրոնից 62 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 160 կմ: Գյուղը սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը: Նորաշեն գյուղը հիշատակվում է 19-րդ դարից: Գյուղի բնակիչների նախնիները եկել են Կարսից, Մուշից՝ 1860-ական թվականներին: Գյուղը հիմնականում ձևավորվել է 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանից ներգաղթած բնակչությամբ: Գյուղը ավելի հին է, քան ենթադրվում է՝ վկայությունն է գյուղի ծայրամասում գտնվող կիսաքանդ եկեղեցին: Գտնվում է ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա: Գյուղի ռելիեֆը հարթավայրային է: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը զով: Հաճախ են երկարատև անձրևները եւ կարկտահարությունը: Գյուղ տանող ճանապարհը ասֆալտապատ է, առկա է խմելու ջրի մատակարարում, սակայն ունի բնակիչներին բաժանորդ դարձնելու խնդիր: Իրականացվում է աղբահանություն: Գյուղը շուրջ 60%-ով ապահովված է գիշերային լուսավորությամբ և ամբողջությամբ առկա է գազամատակարարում: Բացակայում են բնակչության զբաղվածության ապահովման պայմանները: Առկա չեն կարկտակայաններ: Գյուղի վարչական տարածքը կազմում է 1413.29 հա: Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 1325 մարդ:

### **Արծնի գյուղ**

Արծնի գյուղը գտնվում է Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 15 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 67 կմ հեռավորության վրա, մայրաքաղաքից՝ 200 կմ: Գյուղը սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը: ՀՀ կառավարության որոշմամբ համարվում է սահմանամերձ գյուղ: Նախկինում ունեցել է Ղզըլգիլիսե, Դազ Զարաքիլիսա, Կզըլդաշ, Կզըլքիլիսա, Ղարաքիլիսա, Ղզըլքիլիսա, Ղզըլդաշ անվանումները: Արծնի է վերանվանվել 1991թ.-ին: Արծնի գյուղը վերաբնակեցվել է 1988թ. դեկտեմբեր ամսից, Ադրբեջանի Հանրապետության տարբեր շրջաններից բռնի գաղթած փախստականներով և Վրաստանի Հանրապետության տարբեր շրջաններից եկած բնակիչներով: Գյուղը նախկինում եղել է ադրբեջանաբնակ, դրա վառ ապացույցն այն է, որ գյուղը չունի ոչ մի եկեղեցական շինություն: Կլիման բարեխառն լեռնային է, տևական ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը՝ 600-700 մմ, օդը կազդուրիչ է ու առողջարար: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, դաշտավարությամբ: Գյուղը ապահովված է գազամատակարարումով, առկա է խմելու ջուր, սակայն մատակարարման պայմանները բավարար չեն, 2018 թվականից լուծվել է նաև աղբահանության խնդիրը: Բացակայում են բնակչության զբաղվածության ապահովման պայմանները: Գյուղ տանող ճանապարհը ունի ասֆալտապատման խնդիր: Առկա չեն կարկտակայաններ: Բացակայում է հանրային տրանսպորտը, որը բնակավայրից բնակիչների արտահոսքի գլխավոր պատճառներից մեկն է: Գյուղի վարչական տարածքը կազմում է 561.42 հա:

Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 287 մարդ:


### **Ապավեն գյուղ**

Ապավեն գյուղը գտնվում է Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 16կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 68կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 184կմ: Նախկինում մտել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեջ և ունեցել է Սայրիար Փոքր, Սարիալ-Փոքր, Սարիար, Սարիար Պոկր անվանումները: Ապավեն է վերանվանվել 1991 թվականին: Ապավեն գյուղը ձևավորվել է 1990 թվականին Վրաստանի ու Ադրբեջանի հանրապետություններից ներգաղթած բնակիչներով: Ապավեն գյուղը սահմանամերձ է Վրաստանի հանրապետության հետ: Բարձրությունը ծովի մակարդակից 1680 մետր: Կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը՝600-700մմ: Ռելիեֆը լեռնային է: Բնակչությունը հիմնականում զբաղվում է դաշտավարությամբ , անասնապահությամբ , մեղվաբուծությամբ և թռչնաբուծությամբ : Գյուղում առկա է խմելու ջուր, 2018 թվականից լուծվել է նաև աղբահանության խնդիրը: Բացակայում են բնակչության զբաղվածության ապահովման պայմանները: Գյուղ տանող ճանապարհը ունի ասֆալտապատման խնդիր: Բացակայում է հանրային տրանսպորտը, որը բնակավայրից բնակիչների

արտահոսքի գլխավոր պատճառներից մեկն է: Գյուղի վարչական տարածքը կազմում է 309.08 հա: Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 176 մարդ:

1.2 Համայնքի սոցյալ-տնտեսական իրավիճակը

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 15946 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 8722 (54,7 %) և կանայք՝ 7224(45,3%) :



**Աղյուսակ 1. Համայնքի առկա, մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները :**


Հ/հ	Բնակավայրի անվանումը	Առկա բնակչության թվաքանակը (մարդ)	Համայնքի մշտական բնակչության թիվը՝ ըստ տարիքային կազմի			Առկա տնային տնտեսությունների թվաքանակը
			0-17 տ.	17-62 տ.	63 տ-ից բարձր	
1.	ք. Տաշիր	7130	2450	7562	1733	2854
2.	Բլագոդարնոյե	201	76	155	34	54

3.	Դաշտադեմ	111	29	68	14	31
4.	Մեդովկա	76	77	182	37	24
5.	Կրուգլայա-շիշկա	63	15	63	9	23
6.	Մեղվահովիտ	102	21	70	11	21
7.	Նորամուտ	44	5	36	3	12
8.	Լեռնահովիտ	910	217	659	242	350
9.	Սարատովկա	370	86	193	59	98
10.	Գետավան	76	14	41	9	20
11.	Կաթնառատ	1001	188	675	138	301
12.	Նովոսելցովո	178	40	100	16	-
13.	Մեծավան	5579	1121	3789	900	1437
14.	Պաղաղբյուր	70	12	47	11	22
15.	Ձյունաշող	114	30	77	17	29
16.	Միխայլովկա	849	187	553	109	162
17.	Սարչապետ	1027	434	1352	346	275
18.	Պետրովկա	177	69	196	27	49
19.	Ձորամուտ	315	123	308	67	84
20.	Գոգավան	30	12	53	4	7
21.	Պրիվոլնոյե	252	174	531	141	299
22.	Նորաշեն	929	178	563	188	300
23.	Արծնի	235	102	273	52	58
24.	Ապավեն	68	34	114	20	18


Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Աշխատունակ տղամարդկանց մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

Տեղական ինքնակառավարման մարմինները

2022թ. սեպտեմբերին 25-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ավագանին՝ բաղկացած 21 անդամից, և համայնքի ղեկավարը, որը ձևավորել է համայնքի աշխատակազմը՝ բաղկացած



աշխատակցից:



**Համայնքի ձեռնարկությունները**

Համայնքի տարածքում գործում է 6 համեմատաբար խոշոր արդյունաբերական ձեռնարկություն. կապի հանգույց, էլեկտրացանց, ջրմուղ սպասարկման, գազամատակարարման և գազի սպասարկման ձեռնարկություններ: Արտադրական և շինարարական ոլորտներում զբաղվածների թիվը շուրջ 1400 է: Առևտրի ոլորտում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 500, իսկ սպասարկման ոլորտում՝ 800:

Հաշվի առնելով նաև այլ ոլորտների պետական և համայնքային կազմակերպությունների աշխատակազմերը, զբաղվածների թիվը համայնքում կազմում է շուրջ 6691 մարդ:

**Աղյուսակ 3 : Համայնքի ենթակայության ոչ առևտրային կազմակերպություններն են .**

Հ/հ	Անվանումը, բնակավայրը	Աշխատողների թիվը	Երեխաների թիվը
1.	Ք. Տաշիրի թիվ 1 ՆՈՒՀ ՀՈԱԿ	7	34
2.	ՀԱՄԱՐ 3 ՆՈՒՀ ՀՈԱԿ	11	50
3.	«Ամալյա Կարապետյանի անվան համար 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	24	164
4.	Մեծավանի « Գույների աշխարհ մանկապարտեզ» ՀՈԱԿ	7	34
5.	« Սարչապետ գյուղի Պարտեզ մանկապարտեզ» ՀՈԱԿ	6	27
6.	Սարատովկա ՆՈՒՀ	2	
7.	Տաշիրի արվեստի դպրոց ՀՈԱԿ	17	166
8.	Տաշիրի մշակույթի կենտրոն ՀՈԱԿ	31	160
9.	Տաշիրի մարզադպրոց բյուջետային հիմնարկ	13	190
10.	Տաշիր գրադարանի բյուջետային գրադարանի հիմնարկ	4	--
11.	Մեծավան գյուղի արվեստի դպրոց ՀՈԱԿ	6	13
12.	Մեծավանի մշակույթի կենտրոն բյուջետային հիմնարկ	7	26

**ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**

